Պարոն/Տիկին Ա. Ուլիխանյանին, Հ. Նալբանդյանին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն. Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա. Սաֆարյան

«19» 06 2024թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա. Սաֆարյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Աշխատակիցների անունները, ազգանունները՝**
   - Անուշիկ Աղինյան,
   - Աննա Հարությունյան,
   - Լիլիթ Երեմյան,

2. **Զբաղեցրած պաշտոնը –**

– ՀՀ ՀԾԿՀ իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական սպասարկման բաժնի գլխավոր իրավաբան,

– ՀՀ ՀԾԿՀ սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ,

– ՀՀ ՀԾԿՀ սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի գլխավոր մասնագետ,

3. **Գործուղման վայրը և ժամկետները** – Պոդգորիցա (Մոնտենեգրո), 2024 թվականի հունիսի 10-14-ը.

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)** – ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիա (NARUC):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)** – ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի մշակած՝ բազմազանության,

հավասարության և ներառման (DEI) ջանքերի իրականացման համապարփակ գործիքակազմի վերաբերյալ եռօրյա դասընթացին մասնակցություն.

6. Քննարկված թեմաները (հարցերը)

Դասընթացի առաջին օրը՝ հունիսի 11-ին, կազմակերպիչները ներկայացրեցին քննարկվող նյութի առանցքային գաղափարներն ու առաջադեմ փորձի օրինակները: Կազմակերպվեց ինտերակտիվ վարժություն՝ բացահայտելու մասնակիցների պատկերացումները գենդերային հավասարության և սոցիալական ներառման վերաբերյալ: Ներկայացվեց գենդերային հավասարություն և սոցիալական ինտեգրման (GESI), բազմազանության, արդարության, ներառման և հասանելիության (DEIA) կարևորությունը էներգետիկ համակարգում և ոլորտի կարգավորող մարմիններում, ներկայացվեցին գործող լավագույն փորձի օրինակներ: Քննարկվեցին նաև ոլորտին վերաբերելի իրավական մի շարք ակտեր՝ միջազգային կոնվենցիաներ, իրավական այլ փաստաթղթեր: Խմբային աշխատանքների միջոցով վեր հանվեցին տարբեր սոցիալական խմբերի համար գոյություն ունեցող խոչընդոտները, ինչպես նաև ուսումնասիրվեցին GESI/DEIA տարածաշրջանային մարտահրավերները: Նշված համատեքստում կազմակերպիչները ներկայացրեցին տարբեր երկրների և տարբեր կարգավորող մարմինների մասով իրենց կողմից իրականացված հարցումների և գնահատումների արդյունքները:

Դասընթացի երկրորդ օրը՝ հունիսի 12-ին, իրականացվեց GESI/DEIA ոսկե ստանդարտների և ներդրման նվազագույն պահանջների վերլուծություն, առավել ներառական աշխատատեղի ստեղծման հիմունքների, դրա կարևորության և կազմակերպման լավագույն փորձի ուսումնասիրություն: Ներկայացվեց ներառական պրակտիկայի կարևորությունը հատկապես խնամակալների մասով, ներառյալ հետադարձ կապի ներդրումն ու համապատասխան հստակ քաղաքականության առկայությունը, որը կարող է ամրապնդել կանանց նկատմամբ հավասարությունը էներգետիկ ոլորտում:

Դասընթացի երրորդ օրը՝ հունիսի 13-ին մասնակիցները խմբային քննարկումներ իրականացրեցին՝ GESI/DEIA մոտեցումների գործարկման նպատակով ստացած գիտելիքները իրենց հանձնաժողովների մասով իրականացվող գործողությունների ծրագրի զարգացմանն ուղղելու նպատակով: Ուսումնասիրվեցին GESI/DEIA գնահատման համակարգը, գործիքակազմը, մեթոդաբանությունը և դրանց կարևորությունը: Մասնակիցները տարբեր երկրներից մասնակիցներից կազմված խմբերով քննարկեցին կազմակերպիչների կողմից ներկայացված մի շարք իրավիճակներ և փորձեցին գտնել պրակտիկ լուծումներ: Յուրաքանչյուր կարգավորող մարմնի ներկայացնող խումբ իրականացրեց իրենց հանձնաժողովներում առկա GESI/DEIA գնահատում՝ որոշելու իրենց

հանձնաժողովների դիրքը ըստ առավել զարգացած քաղաքականություն ունենալու աստիճանի:

7. Հանդիպումները, ելույթները. – Եռօրյա հանդիպման ընթացքում մասնակից երկրների ներկայացուցիչների ներգրավմամբ տեղի ունեցան ծավալուն քննարկումներ ներկայացված թեմաների վերաբերյալ, կազմակերպվեցին խմբային ինտերակտիվ աշխատանքներ, որոնց արդյունքում վերջիններս հաղթահարեցին առաջադրված խնդիրները, ինչպես նաև ներկայացրեցին իրենց մարմիններում գործող կարգավորումները:

ՀՀ ՀԾԿՀ ներկայացուցիչները ևս ներկայացրեցին գործող իրավակարգավորումները և փաստացի գոյություն ունեցող պրակտիկան Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում: Ներկայացվեց համանուն նախորդ հանդիպման արդյունքում հանձնաժողովի կողմից GESI/DEIA ներդրման ուղղությամբ կազմված գործողությունների ծրագիրը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները -

Ակնկալվում է առաջիկա 6 ամսվա ընթացքում զարգացնել GESI/DEIA ներդրման ուղղությամբ կազմված գործողությունների ծրագիր: Միևնույն ժամանակ առաջարկվում է քննարկել հանձնաժողովում GESI/DEIA հստակ քաղաքականություն ներդնելու հեռանկարները:

Գործուղվող ---------- 19.06.2024թ. ---------- ***Ա. Աղինյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 19.06.2024թ. ---------- ***Ա. Հարությունյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 19.06.2024թ. ---------- ***Լ. Երեմյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 402-ԳՔ, 15.05.2024թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական սպասարկման բաժնի գլխավոր իրավաբան **Անուշիկ Աղինյան** ,

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի գլխավոր մասնագետ **Լիլիթ Երեմյան** ,

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ **Աննա Հարությունյան** :

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Պոդգորիցա / Մոնտենեգրո /**

5. Գործուղման ժամկետները՝ **10.06-14.06.2024թ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, **օրապահիկ** և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուշիկ Աղինյան	Լիլիթ Երեմյան	Աննա Հարությունյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				-
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		-	-	-	-

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 19.06.2024թ.